TNS opinion

Հարցում. նախընտրական պատկերը Հայաստանում

Հիմնական բացահայտումներ

22 մարտի, 2012թ.

Բովանդակությունը

1. Հարցման մեթոդաբանությունը և որակի վերահսկումը
2. Հասարակության քաղաքական հետաքրքրվածությունը և տեղեկացվածությունը
3. Հասարակության ընտրական մասնակցությունը և կուսակցական նախապատվությունները
4. Հասարակության նախապատվությունները ապագա նախագահական ընտրություններում
5. Ընդհանուր քաղաքական դիրքորոշումներ

TNS opinion

1. Հարցման մեթոդաբանությունը և որակի վերահսկումը

TNS opinion

EuFoA European Friends of Armenia

Մեթոդաբանությունը

- Հետազոտությունում կիրառվել է բազմաստիճան, պատահական (հավանականային) ընտրանք: Ընտրանքի առաջնային միավորները՝ բնակավայրերը, ընտրվել են ՀՀ բոլոր վարչական-տարածքային միավորներից՝ համամասնորեն: IPSC և *TNS opinion* կազմակերպությունները կիրառված մեթոդաբա-նությունը համարել են լավագույնը:

- Իրականացվել է 1,602 դեմ առ դեմ հարցազրույց՝ 2012 թ. փետրվարի 29-ից մարտի 5-ը:

- Հարցազրույցներն իրականացվել են Հայաստանի 10 մարզերում և Երևանի բոլոր համայնքներում՝ ՀՀ բնակչության բաշխմանը համամասնորեն. Երևանում՝ 35.0%, մարզերում՝ 65.0 %:
- Տնային տնտեսություններն ընտրվել են պատահական քայլով՝ բացառելու համար զրուցավարների կողմից հարցվողների հնարավոր կողմնակալ ընտրության հետևանքով առաջացող սիստեմատիկ սխալները: Պատահական ընտրությունն ապահովելու համար տնային տնտեսություններում հարցման համար ընտրվել է այն անդամը, ում ծննդյան օրն ամենամոտն էր հարցման օրվան:
- Եթե հարցման համար ընտրված անձը տվյալ պահին բացակայել է, ապա իրականացվել է մեկից երկու հետայց՝ այնուամենայնիվ նրա՛ հետ հարցազրույց իրականացնելու համար: Հետայցերի անհաջողության կամ ընտրված անձի՝ հարցազրույցին մասնակցելուց հրաժարվելու դեպքում զրուցավարը նախորոշված ընթացակարգով ընտրել է հաջորդ տնային տնտեսությունը:
- Ընտրանքի իրականացման վերահսկման համար յուրաքանչյուր զրուցավար պարտավոր է եղել լրացնել իր այցելած տնային տնտեսությունների հասցեների այցացուցակը: Այցացուցակների տվյալների շտեմարանը վերլուծվել է *TNS opinion-ի* ներկայացուցչի կողմից՝ հավաստիանալու, որ զրուցավարները պահպանել են տնային տնտեսությունների և հարցվողների ընտրության նախորոշված ցուցումները:
- Տվյալները համակշռվել են ըստ ՀՀ բնակչության մարզային և սեռատարիքային բաշխումների: Հետազոտության արդյունքների ընտրանքային սխալը ±2.4% է:

TNS opinion

EuFoA European Friends of Armenia

Որակի վերահսկողությունը

- ISPC–ն և *TNS opinion*-ը համատեղ պլանավորել և համաձայնեցրել են ինչպես որակի վերահսկողության մեթոդաբանությունը, այնպես էլ դաշտային աշխատանքների վերահսկումը և հարցման իրականացումը:
- Ապահովելու համար հարցազրույցների իրականացման որակի համապատասխան ստանդարտները, հարցազրույցների 18%-ն իրականացվել է IPSC-ի դաշտային աշխատանքների որակի վերահսկման համակարգողների ներկայությամբ: IPSC–ի հարցաթերթերի որակի ստուգման պատասխանատուները ստուգել են բոլոր հարցաթերթերի լրացման որակը, այդ թվում՝ լրացված պատասխանների տրամաբանական համապատասխանությունը: Հարցաթերթերի 5%-ը ստուգվել է հետայցերով: Իրականացվել է տվյալների շտեմարան մուտքագրված հարցաթերթերի 25%-ի վերաստուգում: Բոլոր ստուգումների արդյունքում խոտանվել է 24 հարցազրույց (ընտրանքի 1.5%- ի չափով):
- ISPC-ն և TNS opinion-ը միմյանցից անկախ ստուգել են զրուցավարների երթուղային թերթիկները՝ հավաստիանալու, որ հարցվողների ընտրությունն իրականացվել է նախորոշված պատահական ընթացակարգով:
- IPSC-ն հեռախոսազանգերի միջոցով ստուգել է բոլոր հարցվածների 29%-ի ժողովրդագրական բնութագրերը, ինչպես նաև հարցումների իրականացման պայմանների համապատասխանությունը զրուցավարի կողմից հարցաթերթերում լրացված տվյալներին: Բացի դրանից, *TNS opinion*–ը հեռախոսազանգերով ստուգել է իրականացված հարցազրույցների պատահականորեն ընտրված 10%-ը՝ հարցվածների ժողովրդագրական բնութագրերը և հարցվողի դիրքորոշումներին վերաբերող երկու պատահականորեն ընտրված հարցերին տրված պատասխանները: Ստուգումը հավաստել է հավաքագրված տվյալների համապատասխանությունը որակի պահանջված մակարդակին:
- *TNS opinion*-ը բազմակողմանիորեն ստուգել է տվյալների շտեմարանը՝ տրամաբանական անհամապատասխանությունների, ոչ ադեկվատ պատասխանների, պատահական սխալների և անվավեր տեղեկությունների հայտնաբերման նպատակով: Ստուգման արդյունքում արձանագրվել է դրական գնահատական՝ ոչ մի հարցազրույց չի խոտանվել:

TNS opinion

EuFoA European Friends of Armenia

2. Հասարակության քաղաքական հետաքրքրվածությունը և տեղեկացվածությունը

TNS opinion

Բնակչության 55%-ը «ավելի շուտ» կամ «լիովին» հետաքրքրված է քաղաքականությամբ: Հետաքրքրությունն աճում է տարիքին և կրթական մակարդակին զուգահեռ:

Q1. Ասացեք, խնդրեմ, որքան՞վ եք հետաքրքրված ՀՀ սոցիալ-քաղաքական հարցերով:

Քաղաքականությամբ հետաքրքրվածության մակարդակը



Հետաքրքրվածության մակարդակն ըստ տարիքի («ավելի շուտ» կամ «լիովին» հետաքրքրված)



Հետաքրքրվածության մակարդակն ըստ կրթամակարդակի («ավելի շուտ» կամ «լիովին» հետաքրքրված)



TNS opinion

Հեռուստատեսությունը շարունակում է մնալ քաղաքական տեղեկատվության հիմնական աղբյուրը, այն դեպքում, երբ ինտերնետի՝ որպես տեղեկատվական աղբյուրի օգտագործումը վերջին 1,5 տարում զգալիորեն աճել է :

Q2. Ասացեք, խնդրեմ, ինչպե՞ս եք տեղեկանում Հայաստանի սոցիալ-քաղաքական իրադարձությունների մասին:



TNS opinion

Ապագան պատկանում է ինտերնետին՝ տեղեկատվություն ստանալու համար երիտասարդությունն աստիճանաբար անցնում է հեռուստատեսությունից ինտերնետ:

Q2. Ասացեք, խնդրեմ, ինչպե՞ս եք տեղեկանում Հայաստանի սոցիալ-քաղաքական իրադարձությունների մասին:



TNS opinion

EuFoA European Friends of Armenia

IPSC

Երկրում տիրող իրավիճակի մասին պատկերացումներն ավելի բացասական են, քան ընտանիքների իրական վիճակը:

Q24. Համեմատելով **5** տարի առաջվա հետ՝ Ձեր կարծիքով՝ Հայաստանում ընդհանուր իրավիճակը… :
Q25. Իսկ, հաշվի առնելով մեր երկրի ընդհանուր վիճակը, ի՞նչ եք կարծում՝ Հայաստանում կյանքն ընդհանուր առմամբ … :
Q26. Իսկ որքանո՞վ եք բավարարված Ձեր ընտանիքի ներկայիս ընդհանուր վիճակով:



Քաղաքական «ներգրավվածությունը» շարունակում է հիմնականում դրսևորվել ընկերական զրույցների տեսքով: Հասարակությունում բավական մեծ թիվ են կազմում կուսակցականները:

Q3. Այժմ մի քանի հարց Ձեր հասարակական-քաղաքական ներգրավվածության մասին:



Մարդիկ առավելապես տեղեկացված են ներկայիս Ազգային Ժողովի կուսակցությունների, ինչպես նաև Հայ ազգային կոնգրեսի մասին:

Q4. Նշեք, խնդրեմ, մինչև 5 հայաստանյան կուսակցության անուն, որոնց մասին առավել լավ եք տեղեկացված: (Բաց հարց առանց հուշման)

Կուսակցություններ, որոնց մասին մարդիկ առավել իրազեկ են



TNS opinion

Ընտրությունների նախաշեմին բոլոր խոշոր կուսակցությունների մասին տեղեկացվածությունը կտրուկ աճել է:

Q4. Նշեք, խնդրեմ, մինչև 5 հայաստանյան կուսակցության անուն, որոնց մասին առավել լավ եք տեղեկացված: (Բաց հարց ՝ առանց հուշման)



TNS opinion

EuFoA European Friends of Armenia

IPSC

Մարդիկ առավելապես տեղեկացված են Գ. Ծառուկյանի, Ս. Սարգսյանի և Ա. Բաղդասարյանի մասին:

Գծապատկերում ներկայացված են հարցվողների կողմից նշված 202 քաղաքական գործիչներից միայն նրանք, որոնք հիշատակվել են բոլոր պատասխանների առնվազն 1.0% -ի դեպքում:

Q5. Նշեք, խնդրեմ, հայաստանյան հայտնի քաղաքական գործիչների մինչև 5 անուն, որոնց մասին առավել լավ եք տեղեկացված: (Բաց հարց՝ առանց հուշման)



TNS opinion

EuFoA European Friends of Armenia

IPSC

2010 թ. հոկտեմբերից 2012 թ. մարտ ընկած ժամանակահատվածում բոլոր քաղաքական գործիչների մասին տեղեկացվածությունը կտրուկ աճել է:

Q5. Նշեք, խնդրեմ, հայաստանյան հայտնի քաղաքական գործիչների մինչև 5 անուն, որոնց մասին առավել լավ եք տեղեկացված: (Բաց հարց առանց հուշման)



TNS opinion

EuFoA European Friends of Armenia

3. Հասարակության ընտրական մասնակցությունը և կուսակցական նախապատվությունները

Հարցվողների 64% -ը նշել է, որ միանշանակ կմասնակցի առաջիկա՝ 2012 թ. մայիսի խորհրդարանական ընտրություններին:

Q7. Հավանաբար գիտեք, որ այս տարվա մայիսին Հայաստանում տեղի են ունենալու Ազգային Ժողովի ընտրություններ: Այդ ընտրություններին Դուք՝ միանշանակ մասնակցելու եք, հավանաբար մասնակցելու եք, հավանաբար չեք մասնակցելու, միանշանակ չեք մասնակցելու: *(«Դեռ չեք որոշել»* տարբերակը չի ընթերցվել)



TNS opinion

EuFoA European Friends of Armenia

Այն դեպքում, երբ անձը համարում է, որ գոյություն ունի իր շահերն արտահայտող կուսակցություն քվեարկելու հավանականությունն աճում է 15% տոկոսային կետով:

Q7. Հավանաբար գիտեք, որ այս տարվա մայիսին Հայաստանում տեղի են ունենալու Ազգային Ժողովի ընտրություններ: Այդ ընտրություններին Դուք միանշանակ մասնակցելու եք, հավանաբար մասնակցելու եք, հավանաբար չեք մասնակցելու, միանշանակ չեք մասնակցելու: (Այստեղ ներկայացված են միայն *«միանշանակ մասնակցելու եմ»* տարբերակի արդյունքները)

Q22. Այժմ ես կկարդամ տարբեր դատողություններ քաղաքական կյանքի մասին, իսկ դուք 1-4 բալանոց սանդղակով գնահատեք, թե որքանով եք համաձայն դրանց հետ: (Այստեղ ներկայացված են միայն *«լիովին համաձայն եմ»* և *«ավելի շուտ համաձայն եմ»* տարբերակների արդյունքները)

TNS opinion

Հետազոտության դաշտային փուլում ակնհայտ առաջատարներն են «Բարգավաճ Հայաստան» և Հայաստանի հանրապետական կուսակցությունները (վիճակագրորեն աննշան տարբերությամբ): Հատկանշական է, որ ընտրողների բավական մեծ հատվածը` 32.1% -ը, կամ` դեռ չի կողմնորոշվել,, կամ` հրաժարվել է պատասխանել , կամ` նշել է, որ դեմ է բոլորին:

Q8. Իսկ եթե Ազգային Ժողովի ընտրությունները լինեին այս կիրակի, ապա Դուք ո՞ր կուսակցությանը կտայիք Ձեր ձայնը: (Բաց հարց` առանց հուշման)



TNS opinion

EuFoA European Friends of Armenia

IPSC

ԲՀԿ-ն և ՀՀԿ -ն առաջատարներ են նաև հարցվածների երկրորդ նախապատվությամբ: Մինչդեռ փոքր կուսակցությունների երկրորդ քվեները համեմատաբար ավելին են, ինչը ցույց է տալիս նրանց քվեների աճի ներուժը:

Q8. **Իսկ եթե Ազգային Ժողովի ընտրությունները լինեին այս կիրակի, ապա Դուք ո՞ր կուսակցությանը կտայիք Ձեր ձայնը:** (Բաց հարց՝ առանց հուշման)

Q10. **Եթե պատկերացնենք, որ Ձեր նշած կուսակցությունը չի մասնակցում ԱԺ ընտրություններին, ապա ո ր կուսակցության օգտին կքվեարկեիք:** (մեկ պատասխան)



TNS opinion

ՀՀԿ ընտրազանգվածի 2/3-ը նրանք են, ովքեր 2007թ. քվեարկել են ՀՀԿ օգտին, իսկ ԲՀԿ ընտրազանգվածի մեծամասնությունը հավաքագրվել է 2007-2012թթ. ընթացքում:

Ընտրողների շարժը դեպի ԲՀԿ 2007-2012թթ. ընթացքում (վերահաշվարկվել է որպես ընտրողների բացարձակ քանակ)

2007	Ընտրողներ
ՀՀԿ, 2007	**103,320**
ԲՀԿ, 2007	**62,403**
ՀՀԴ, 2007	**12,915**
ՕԵԿ, 2007	**27,983**
Ժառ., 2007	**8,610**
Այլ կուսակց. /ԴՊ/ՀՊ, 2007	**96,863**
Չեն քվեարկել 2007-ին	**269,063**

ԲՀԿ, 2012

ԸՆԴՀԱՆՈՒՐ 581,157 կամ Հայաստանի ընտրողների 27.1%

(դե ֆակտո բնակչության)

Ընտրողների շարժը դեպի ՀՀԿ 2007-2012թթ. ընթացքում (վերահաշվարկվել է որպես ընտրողների բացարձակ քանակ)

2007	Ընտրողներ
ՀՀԿ, 2007	**260,453**
ԲՀԿ, 2007	**8,610**
ՀՀԴ, 2007	**6,458**
ՕԵԿ, 2007	**10,763**
Ժառ., 2007	**2,153**
Այլ կուսակց. /ԴՊ/ՀՊ, 2007	**58,118**
Չեն քվեարկել 2007-ին	**172,200**

ՀՀԿ, 2012

ԸՆԴՀԱՆՈՒՐ 518,755 կամ Հայաստանի ընտրողների 24.5%

(դե ֆակտո բնակչության)

TNS opinion

EuFoA European Friends of Armenia

Հաշվի առնելով ընտրանքային սխալը, կարելի է ենթադրել, որ ցածր վարկանիշներով չորս կուսակցությունները չեն կորցրել ԱԺ անցնելու հնարավորությունը: Վիճակագրորեն նշանակալի աճել են միայն ՀՀԿ և ՀՅԴ վարկանիշները

Q8. Իսկ եթե Ազգային Ժողովի ընտրությունները լինեին այս կիրակի, ապա Դուք ո՞ր կուսակցությանը կտայիք Ձեր ձայնը:



TNS opinion

EuFoA European Friends of Armenia

IPSC

ՀՀԿ ընտրազանգվածի առավել մեծ հատվածն է հակված «միանշանակ մասնակցելու» ԱԺ ընտրություններին:

Q7. Հավանաբար գիտեք, որ այս տարվա մայիսին Հայաստանում տեղի են ունենալու Ազգային Ժողովի ընտրություններ: Այդ ընտրություններին Դուք միանշանակ մասնակցելու եք, հավանաբար մասնակցելու եք, հավանաբար չեք մասնակցելու, միանշանակ չեք մասնակցելու: *(«Դեռ չեք որոշել»* տարբերակը չի ընթերցվել)

Q8. Իսկ եթե Ազգային Ժողովի ընտրությունները լինեին այս կիրակի, ապա Դուք ո՞ր կուսակցությանը կտայիք Ձեր ձայնը: (Բաց հարց առանց հուշման)



TNS opinion

Որևէ կուսակցության օգտին քվեարկելու հիմնական դրդապատճառներն են. «[կուսակցության] *մարդկանց օգնելու ունակությունը*» և «*վստահությունը կուսակցության առաջնորդի և անդամների նկատմամբ* »: Դրդապատճառների հարաբերակցությունը նույնն է և՛ կուսակցականների, և՛ անկուսակցականների դեպքում:

Q9. Իսկ որո՞նք են այդ կուսակցությանը ձայն տալու հիմնական պատճառները: Կարող եք ընտրել բոլոր այն տարբերակները, որոնք կարևոր եք համարում:



TNS opinion

ՀՀԿ ընտրազանգվածի 27% -ը կուսակցական է (ոչ պարտադիր կերպով ՀՀԿ անդամ):

Q3.7. Դուք որևէ կուսակցության անդա՞մ եք (կարևոր չէ, թե որ):

Q8. Իսկ եթե Ազգային Ժողովի ընտրությունները լինեին այս կիրակի, ապա Դուք ո՞ր կուսակցությանը կտայիք Ձեր ձայնը: (Բաց հարց առանց հուշման)



TNS opinion

EuFoA European Friends of Armenia

IPSC

Ըստ հարցվածների՝ Հայաստանի առջև կանգնած խնդիրները լավագույնս կարող են լուծել ՀՀԿ-ն և ԲՀԿ-ն:
Ընդդիմությունը համեմատաբար արդյունավետ է դիտվում մարդու իրավունքների/ ժողովրդավարության խնդիրների ոլորտում, իսկ «Ժառանգությունը»՝ նաև էկոլոգիական խնդիրներում:
Կոռուպցիան և թանկացումները մնում են որպես առավել անարդյունավետ լուծվող խնդիրներ:

Q27. Այժմ ես կկարդամ Հայաստանի համար կարևոր մի քանի հիմնախնդիրներ: Ասացեք, խնդրեմ, ո՞ր կուսակցությունը կարող է լավագույնս լուծել դրանք: *(Կուսակցությունների անունները ներկայացված են այբբենական կարգով)*

Խնդիրները	ԲՀԿ	ԺԿ	ՀԱԿ	ՀՀԿ	ՀՀԴ	ՕԵԿ	Այլ	Ոչ մեկը
Գործազրկություն	50%	6%	4%	15%	3%	5%	1%	17%
Մարդու իրավունքների/ ժողովրդավարության հետ կապված խնդիրներ	20%	15%	4%	20%	11%	12%	2%	17%
Կոռուպցիա	14%	7%	4%	24%	7%	6%	0%	38%
Կրթական համակարգի խնդիրներ	31%	10%	3%	29%	5%	9%	1%	13%
Առողջապահական համակարգի խնդիրներ	49%	2%	4%	21%	3%	2%	1%	18%
Բնապահպանական խնդիրներ	24%	14%	4%	28%	5%	5%	0%	21%
Թանկացումներ	20%	5%	5%	30%	3%	1%	2%	35%
Աղքատություն	35%	3%	3%	21%	2%	2%	2%	34%
Ղարաբաղյան հակամարտություն	9%	3%	5%	52%	10%	3%	2%	17%
Երկրի արտաքին անվտանգություն	11%	4%	3%	54%	8%	7%	2%	11%

TNS opinion

Հարցվածները համարում են, որ ՀՀԿ-ն առավել արդյունավետ է արտաքին քաղաքականության և անվտանգության խնդիրների լուծման ոլորտում, իսկ ԲՀԿ-ն՝ սոցիալ-տնտեսական խնդիրների:

Q27. Այժմ ես կկարդամ Հայաստանի համար կարևոր մի քանի հիմնախնդիրներ: Ասացեք, խնդրեմ, ո՞ր կուսակցությունը կարող է լավագույնս լուծել դրանք: (*Կուսակցությունների անունները ներկայացված են այբբենական կարգով*)

Խնդիրները	ԲՀԿ	ՀՀԿ
Գործազրկություն	51%	16%
Մարդու իրավունքների/ ժողովրդավարության հետ կապված խնդիրներ	22%	22%
Կոռուպցիա	17%	23%
Կրթական համակարգի խնդիրներ	31%	29%
Առողջապահական համակարգի խնդիրներ	50%	21%
Բնապահպանական խնդիրներ	29%	26%
Թանկացումներ	24%	29%
Աղքատություն	35%	23%
Ղարաբաղյան հակամարտություն	10%	52%
Երկրի արտաքին անվտանգություն	14%	52%

TNS opinion

EuFoA European Friends of Armenia

Ավելի ցածր սոցիալական դիրք ունեցող մարդիկ կամ՝ հակված են քվեարկելու ԲՀԿ օգտին , կամ՝ «բոլորին դեմ են»:
Սոցիալական ավելի բարձր դիրք ունեցող մարդիկ ավելի շատ հակված են քվեարկելու ընդդիմադիր կուսակցությունների օգտին:

D6. Ասացեք, խնդրեմ, 0-10 բալանոց սանդղակով հասարակության ո՞ր աստիճանի վրա կտեղադրեիք Ձեր ընտանիքը՝ հաշվի առնելով բարեկեցության մակարդակը, որտեղ 0-ը նշանակում է հասարակության ամենացածր, իսկ 10-ը՝ հասարակության ամենաբարձր աստիճանը:

Q8. Իսկ եթե Ազգային Ժողովի ընտրությունները լինեին այս կիրակի, ապա Դուք ո՞ր կուսակցությանը կտայիք Ձեր ձայնը: (Բաց հարց առանց հուշման)



TNS opinion

EuFoA European Friends of Armenia

Այլ կուսակցությունների (ոչ ԲՀԿ և ՀՀԿ) ընտրազանգվածը, ինչպես նաև ընտրություններին չմասնակցողների և ոչ մի կուսակցության օգտին չքվեարկողների մեծ մասը բնակվում է Երևանում:

Q8. Իսկ եթե Ազգային Ժողովի ընտրությունները լինեին այս կիրակի, ապա Դուք ո՞ր կուսակցությանը կտայիք Ձեր ձայնը: (Բաց հարց առանց հուշման), ըստ բնակավայրի տեսակի



Առաջատար կուսակցությունների ընտրազանգվածների մեծամասնությունը կանայք են, իսկ մյուսներինը՝ տղամարդիկ:

Q8. Իսկ եթե Ազգային Ժողովի ընտրությունները լինեին այս կիրակի, ապա Դուք ո՞ր կուսակցությանը կտայիք Ձեր ձայնը: (Բաց հարց՝ առանց հուշման), ըստ սեռի



Առաջատար երկու կուսակցությունների ընտրազանգվածներն ավելի երիտասարդ են:
30-49 տարեկանները ավելի են հակված չմասնակցելու ընտրություններին:

Q8. Իսկ եթե Ազգային Ժողովի ընտրությունները լինեին այս կիրակի, ապա Դուք ո՞ր կուսակցությանը կտայիք Ձեր ձայնը: (Բաց հարց՝ առանց հուշման), ըստ տարիքի



TNS opinion

EuFoA European Friends of Armenia

IPSC

Ամենացածր կրթամակարդակով անձինք առավելապես հակված են քվեարկելու ԲՀԿ օգտին, իսկ ամենաբարձր կրթամակարդակով անձինք առավելապես հակված են չքվեարկելու որևէ կուսակցության օգտին :

Q8. Իսկ եթե Ազգային Ժողովի ընտրությունները լինեին այս կիրակի, ապա Դուք ո՞ր կուսակցությանը կտայիք Ձեր ձայնը: (Բաց հարց՝ առանց հուշման), ըստ կրթամակարդակի



TNS opinion

EuFoA European Friends of Armenia

IPSC

Տնային տնտեսուհիները և գործազուրկները առավելապես հակված են քվեարկելու ԲՀԿ օգտին, պետական ծառայողները` ՀՀԿ օգտին, իսկ թոշակառուները և գործազուրկները` այլ կուսակցությունների օգտին:

Q8. Իսկ եթե Ազգային Ժողովի ընտրությունները լինեին այս կիրակի, ապա Դուք ո՞ր կուսակցությանը կտայիք Ձեր ձայնը: (Բաց հարց` առանց հուշման), ըստ զբաղմունքի



TNS opinion

ՀՀԿ օգտին քվեարկողները ավելի բարձր են գնահատում վերջին 5 տարիների զարգացումները, սակայն այլ կուսակցությունների օգտին քվեարկողները ավելի վատատես են:

Q24. Համեմատելով 5 տարի առաջվա հետ՝ Ձեր կարծիքով՝ Հայաստանում ընդհանուր իրավիճակը զգալիորեն վատացել է, մասամբ վատացել է, մնացել է նույնը, մասամբ լավացել է, զգալիորեն լավացել է:



Մեծամասնական ընտրություններում ընտրության հիմնական գործոնը «*թեկնածուի քաղաքական փորձառությունն*» է:

Q17. Իսկ ո՞րն է Ձեզ համար ամենակարևոր գործոնը Ազգային Ժողովի մեծամասնական պատգամավորի ընտրության ժամանակ: Նայեք, խնդրեմ, ցուցակին և նշեք ամենակարևոր գործոնը: *(Առաջին տարբերակը նշելուց հետո հարցնել)* Իսկ ո՞րն է երկրորդ ամենակարևոր գործոնը:



TNS opinion

EuFoA European Friends of Armenia

IPSC

Չնայած մեծամասնական տեղերի վերաբերյալ հստակ կանխատեսում ները անորոշ են, սակայն հավանական է, որ 2012թ. ԱԺ-ում ԲՀԿ-ն կունենա ավելի շատ մեծամասնական մանդատներ, քան՝ 2007թ.-ին: Այնուամենայնիվ , ՀՀԿ մեծամասնական մանդատները կլինեն ավելի շատ:

Q15. **Կարո՞ղ եք արդյոք հիշել թեկնածուի անունը (կամ կուսակցության անունը, որը չ ներկայացնում էր այդ թեկնածուն), ում օգտին դուք քվեարկել եք՝ որպես մեծամասնական պատգամավորի 2007թ.-ի Ազգային Ժողովի ընտրություններին:** (բաց հարց առանց հուշման, արդյունքներն խմբավորվել են ըստ կուսակցության)

Q16 **Եթե արդեն տեղյակ եք, ասացեք, խնդրեմ, ո՞ւմ կցանկանայիք ընտրել որպես Ձեր տարածքի մեծամասնական պատգամավոր 2012թ.-ի մայիսի ԱԺ ընտրություններին:** (բաց հարց առանց հուշման, արդյունքներն խմբավորվել են ըստ կուսակցության)



TNS opinion

EuFoA European Friends of Armenia

IPSC

Բոլոր չորս փոքր կուսակցություններն ունեն 5% շեմը գերազանցելու շանսեր: Նոր Ազգային ժողովի կազմը <u>ներկա պահին հնարավոր չէ կանխատեսել</u>: Ներկայացված են հետևյալ սահմանային սցենարները.
ա) 5% շեմը հաղթահարել են բոլոր չորս կուսակցությունները և
բ) 5% շեմը չի հաղթահարել չորսից և ոչ մեկը:
(Սցենարները ներառում են 41 մեծամասնական և 90 համամասնական տեղերի բաշխման հաշվարկը):





Սցենար	ՀՀԿ	ԲՀԿ	Այլ
Ոչ մի փոքր կուս. ԱԺ-ում	63	62	6
Անհամապատ. ± 5 տեղ	58 ≤ ՀՀԿ ≤ 68	57 ≤ ԲՀԿ ≤ 67	1 ≤ Այլ ≤ 11
4 փոքր կուս.-ներ ԱԺ-ում	54	51	26
Անհամապատ. ± 5 տեղ	48 ≤ ՀՀԿ ≤ 58	46 ≤ ԲՀԿ ≤ 56	21 ≤ Այլ ≤ 31

TNS opinion

EuFoA European Friends of Armenia

4. Հասարակության նախապատվությունները ապագա նախագահական ընտրություններում

Ապագա նախագահական ընտրությունների առավել հավանական առաջատարը Սերժ Սարգսյանն է:

Q18. Այժմ խոսենք նախագահական ընտրությունների մասին: Եթե հաջորդ կիրակի տեղի ունենային նախագահական ընտրություններ, ապա Դուք ո՞ր քաղաքական գործչի օգտին կքվեարկեիք: (Բաց հարց առանց հուշման)

Q19. Եվ, եթե, պատկերացնենք, որ Ձեր նախընտրած քաղաքական գործիչը չի մասնակցելու ընտրություններին, ապա ո՞ւմ օգտին կքվեարկեիք: (Բաց հարց՝ առանց հուշման)



2010 թ. հոկտեմբերից 2012 թ.մարտ Ս. Սարգսյանի վարկանիշն աճել է 6 տոկոսային կետով, իսկ Գ. Ծառուկյանինը՝ 2:

Q18. Եթե հաջորդ կիրակի տեղի ունենային նախագահական ընտրություններ, ապա Դուք ո՞ր քաղաքական գործչի օգտին կքվեարկեիք: (Բաց հարց առանց հուշման)



TNS opinion

5. Ընդհանուր քաղաքական դիրքորոշումներ

Հասարակության վստահությունը քաղաքական գործիչների և պետական կառույցների նկատմամբ բավական ցածր է: Հատկանշական է, որ իշխող կոալիցիայի անդամ ԲՀԿ-ի կողմնակիցների կեսից ավելին հակված է իշխանափոխության:

Q22. Այժմ ես կկարդամ տարբեր դատողություններ քաղաքական կյանքի մասին, իսկ դուք 1-4 բալանոց սանդղակով գնահատեք, թե որքանով եք համաձայն դրանց հետ:



TNS opinion

Միայն 3 կուսակցությունների ղեկավարներն ունեն 5-ից բարձր գնահատական: Առաջատարը Գ. Ծառուկյանն է՝ գերազանցելով Ս. Սարգսյանին և Ր. Հովհաննիսյանին:
Գ. Ծառուկյանին համեմատաբար ավելի բարձր են գնահատել քաղաքականապես ավելի ցածր ակտիվությամբ հարցվածները:

Q21. Այժմ ես կկարդամ կուսակցությունների առաջնորդների անուններ, իսկ Դուք 0-10 բալանոց սանդղակով գնահատեք, թե որքանով եք հավանում նրանց, որտեղ 0-ն նշանակում է, որ ընդհանարապես չեք հավանում, 10-ը՝ լիովին հավանում եք:



TNS opinion

EuFoA European Friends of Armenia

IPSC

Երևանում և՛ Ս. Սարգսյանը, և՛ Գ. Ծառուկյանը գնահատվել են համեմատաբար ավելի ցածր, քան փոքր քաղաքներում և գյուղերում:
Գ. Ծառուկյանը համեմատաբար ավելի բարձր է գնահատվել հիմնականում երիտասարդների, ցածր կրթամակարդակով անձանց և գյուղաբնակների մոտ:
Խորացված վերլուծությունը ցույց է տալիս, որ նրա ընտրազանգվածը ավելի ապաքաղաքական է և նրա օգտին քվեարկելու պատճառները ավելի շուտ տնտեսական են, քան՝ քաղաքական:

Q21. Այժմ ես կկարդամ կուսակցությունների առաջնորդների անուններ, իսկ Դուք 0-10 բալանոց սանդղակով գնահատեք, թե որքանով եք հավանում նրանց, որտեղ 0-ն նշանակում է, որ ընդհանրապես չեք հավանում, 10-ը՝ լիովին հավանում եք: Ըստ ժողովրդագրական տվյալների (Ս. Սարգսյանի և Գ. Ծառուկյանի համար)



10 առավել հաճախ հիշատակված քաղաքական գործիչների ընդհանուր բնութագիրը նրանց «փորձառությունն» է բացառությամբ Գ. Ծառուկյանի, որի հիմնական բնութագիրն է՝ «ֆինանսապես հզոր է» և Տ. Կարապետյանի , ով «հոգ է տանում ժողովրդի մասին»:

Q6. Հետևյալ հատկանիշներից որո՞նք են բնութագրում Ձեր նշած քաղաքական գործիչներին: *(Հարցվել է այն քաղաքական գործիչների վերաբերյալ, որոնք նշվել են առանց հուշման բաց հարցում)*

Քաղաքական գործիչը	1. Փորձառու է	2. Վստահելի է	3. Հոգ է տանում ժողովրդի մասին	4. Հզոր է ֆինանսապես	5. Հզոր է քաղաքականապես	6.Ընդունված է	Թիվը
1. Ծառուկյան Գ.	77%	87%	93%	94%	79%	93%	833
2. Սարգսյան Ս.	100%	71%	66%	80%	87%	70%	741
3. Բաղդասարյան Ա.	69%	46%	41%	47%	62%	51%	534
4. Տեր-Պետրոսյան Լ.	84%	36%	32%	47%	65%	51%	328
5. Սարգսյան Տ.	95%	70%	64%	63%	74%	69%	281
6. Գեղամյան Ա.	75%	42%	40%	33%	54%	48%	260
7. Հովհաննիսյան Ր.	82%	75%	66%	35%	62%	71%	243
8. Հովհաննիսյան Վ.	87%	69%	53%	33%	70%	66%	191
9. Քոչարյան Ռ.	89%	60%	48%	83%	82%	59%	180
10. Կարապետյան Տ.	61%	56%	76%	67%	47%	66%	134

TNS opinion

EuFoA European Friends of Armenia

Շնորհակալություն
ուշադրության համար

Poll: A Snapshot of Pre-Electoral Armenia
Հարցում. նախընտրական պատկերը Հայաստանում

© European Friends of Armenia (EuFoA), 2012
© Հայաստանի Եվրոպացի Բարեկամներ (ՀԵԲ), 2012թ.

www.EuFoA.org

Tel/Հեռ.: + 32 2 233 11 00
Email/էլ. փոստ: brussels@eufoa.org